ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3513-Ա «15 » հուլիսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄՈՍԿՎԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Մոսկվայի կառավարության կազմում Մոսկվայի քաղաքապետի տեղակալ Մոսկվայի տրանսպորտի և ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման վարչության ղեկավար Մաքսիմ Լիկսուտովի 25.02.2026 թվականի նամակ-հրավերը՝ 2026 թվականին Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում նախատեսված 5-րդ տրանսպորտային միջազգային գագաթաժողովին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը 2026 թվականի օգոստոսի 2-ից 6-ը ներառյալ գործուղել Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվա, հետևյալ կազմով.

Դավիթ Գևորգյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ
Հայկ Էվոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար
Բաբկեն Սեդրակյան	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանի բացակայության ընթացքում պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ Վերգինե Սիմոնյանին:

4.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Էվոյանի բացակայության ընթացքում պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության երթևեկության կառավարման բաժնի պետ Արմեն Բարսեղյանին:

5.«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Բաբկեն Սեդրակյանի բացակայության ընթացքում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական գծով տնօրեն Հարություն Դանիելյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ